

դակեաները, որոնք սեպտ. 4-ին հասնելով, յաջորդ օրը կատարեցին թաղման կորզը:

Հանգուցեալը ծնուած էր 1834 թուին Աբարանի Ղարաբուլադ գիւղում, իւր ուսումն ստացել է ս. Էջմիածնի ժառանգաւորաց վարժականում որը աւարտելուց յետոյ՝ 1851 թ. սեպտ. 14-ին ձեռնադրուել է աւագ սարկաւագ և հինգ տարի յետոյ՝ 1856 թ. մարտի 26՝ վարդապետ Առաջարկութեամբ Ներսէսի, Կաթուղիկոսի հաստատուել է անդամ Սինօդի՝ 1857 թ. յունուարի 12-ին, որից արձակուել է 1864 թ. մայիսի 15-ին: Նոյն տարուայ օգոստոսի 15 ին Երեանի թեմի փոխանորդ է նշանակուել. յաջորդ տարուայ յունուարի 9-ին Մատթէոս կաթուղիկոսի հրամանաւ կարգուել է վանահայր Տաթէւու: 1866 թ. սեպտ. 15-ին պատուիրակ է եղել Տ. Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսի ընտրութեան Ժամանակ. 1868 թ. մայիս 13-ին նշանակուել է կառավարիչ Բեսարարիոյ թեմին, նոյն տարուայ օգոստ. 14-ին Խրիմի Ս. Խաչի վանքի վերահսկող, 1869 թ. մարտի 9-ին նախանդամ Բեսարարիոյ հայոց Կոնսիստորիայի՝ 1872 թ. յունուարի 15-ին կրկին կառավարիչ Բեսարարիոյ թեմին, որից արձակուելով 1877 թ. սեպտ. 1-ին, նշանակուել է փոխանորդ Սուխուտյ՝ նոյն տարուայ սեպտ. 29-ին և այս պաշտօնը վարել է մինչև 1883 թ. յունուարի 7: Այս թուականին կոչուելով ս. Էջմիածնի՝ ընտրուել է անդամ Վանական Կառավարութեան և այդ պաշտօնը վարել է մինչև 1888 թ.: 1886 թ.-ի յունուարի 8-ին եպիսկոպոս է ձեռնադրուել Տ. Տ. Մակար Ս. Կաթուղիկոսից. նոյն տարուայ նոյն թիվի 13-ին հաստատուել է անդամ Սինօդի. 1890 օգոստոս 20-ին կարգուել է տեսուչ Գէորգիան հոգեռոր Ծեմարանի. 1893 թ. յունի 21-ին իրեկ պատուիրակ Ն. Ս. Օծութեան Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Հայրապետի՝ ուղերուել է ս. Երուսաղէմ. նոյն տարուայ սեպտ. 21-ին վերստին տեսուչ է եղել Գէորգիան Ծեմարանի. իսկ 1897 թ. գեկտ. 22-ին վեհ. Հայրապետից ստացել է արքեպիսկոպութեան պատիւ:

Իւր այս բազմաթիւ ծառայութեանց մէջ ցոյց տուած արխութեան համար հան-

գուցեալը արժանացել է ծաղկեայ փիլոնի և լանջախաչի պարզեատրութեան 1859-ին. Բեսարարիոյ թեմի բարեւոք կառավարութեան համար ստացել է 1873 թ.-ին շնորհակալութեան կոնդակ, 1887 թ.-ին պնակէ վեհ. Մակար Կաթուղիկոսից, իսկ Ազգիս արզի վեհ. Հայրապետի իրեկ պատուիրակ գնալու ժամանակ՝ Պոլսում Տաճկաց Սուլթանից ստացել է Մէջիղիկէ երկորդ կաթուղի պատուանշան:

Հանգուցեալի թաղման յաջորդ կիւրակին վեհ. Հայրապետի կարգադրութեամբ և նախագահութեամբ հոգեհանգիստ կառարութեացաւ Մայր Տաճարում՝ ինչպէս Սարգիս Սրբազնից այնպէս և Պոլսում վախճանուած Տ. Գրիգորիորիս եպիսկոպոսի համար, որի միջոցին ներ. Սուրբիս Սրբ. մի պատառուչ զամբանական խօսելով՝ զրուատեց երկու սրբազնների գործունեաւթիւնը և մազմեկց, որ Տէր Աստուած անպակաս տնեւ մեր ազգի միջ արժանաւոր հոգեորականներին: *

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՈՑ.

ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ

ԽԵ. ՏԱՐԵԴԱՐՁ

ՃԵՄԱՐԱՆԻ բացման 25-րդ տարեգարձ տօնուեցաւ պաշտօն հանգիստ որութեամբ սեպտ. 25—26-ին:

Այդ օրը ուրիշ տարիների նման ուլաւաւորների մեծ բազմութիւն էր ժողովուել Վաղարշապատում զանտղան կողմերից՝ Ալեքսանդրապոլից Երեանի, Սուրբաղութեան նաև հեռու տեղերից՝ Թիֆլիսից՝ Շուշից և Նախիջեանից ելն: Գիւղը, Վանքի Հիւրատան հին և նոր շինութիւնները ու ամրող բակը լցուած էր նոյցա բազմութեամբ:

* Մի բիւրժանցութեամբ Սարգիս արքանի մահացուցիկ և նոցինացուցի մասին տեղեկութիւնը յէս և մէացել Արարաք նախորդ համարից:

Նոյն օրուայ պատարազին էր Շեմարանի ուսուցիչը Տ. Դարեղին վարդապետ պատարազի կեսին Սորբին Ա. Օծութիւնը հոգեհանգիստ կատարեց հանգուցիւալ Դէռորդ Քանանեանցի յիշտատին՝ այրի տիկնոջ խնդրանքը, որ ու էջմիածինն ուխտ էր եկել իւր դստեր հետ իսկ յետոյ տկար զգալով իրեն ստիպուած էր ենին եկեղեցուց Սակայն պատրազի վերջում, երբ Միարանութիւնը Շեմարանի ուսուցչական խմբի և աշակերտների հետ հոգեհանգիստ կատարեց Շեմարանի յաւերժայիշտատակ Հիմնադրի գերեզմանի վերայ Սորբին Վեհափառութիւնը ներկայ գանուեցաւ կրկին և հանգիսի զլուխն անցաւ Շեմարանի այժմեան սաների և Երեանում ապրող նախկին Ճեմարանականների կողմից երկու գեղեցիկ պատկեր էին զրուած հանգուցեալ Հայրապետի գերեզմանի վերայ Այստեղ 8 լսարանականների կողմից Դ. լսարանի ուսանող Ե. Տէր Մինասեանց մի քանի սրտազեղ խօսքերով յայտնեց իրենց փափազն և ուխտը հոգեորական կոչումն ընդունելու Վեհափառ Հայրապետը բաշխեց նրանց ուրարներ և օրհնեց պահպանիչով համառօտակի բացարձութեալ որչափ խորհրդաւոր էր այդ շնորհաբաշխութիւնը՝ Շեմարանի Հիմնադրի ընթիւ առաջ նորա Յաջորդի ձեռքով:

Հոգեհանգստից յետոյ Վեհափառ Հայրապետը՝ Միարանութեան հետ ուսուցիչները, ոշակերտները և ամրող բազմութիւնը զիմեցին Շեմարանի հիւսիսային բակը ուր ըստ սովորականին կատարուեցաւ հրապարակային հաշուետութեան հանդեւը:

Շեմարանի հիւսիսային ճակաաը զարդարուած էր գեղեցիկ նկարներով բարձրում կամարներից վեր՝ Թագաւոր-Կայսեր «վենդէլ» էր, շրջապատուած բազմաթիւ զրօշակներով նրանից ցած կամարի մէջ Դէռորդ Դ. Մեծագործ Կաթուղիկոսի իւղաների պատկերը, աջ և ձախ կողմերում «ին» (թոշնագիր) և «XXV» նշանները՝ քսան և հինգամեակ բերող հրեշտակներով աւելի ցածը մեծադիր գեղեցկանկար մի պատառ ու Դրբի նշանակալից խօսքերով և Շեմարանի նկարն ասեղնազործ սիւները զոյնզգոյն կտաներով պատած Մեծ մուտքի դէմ ու դէմը, պարտէզի մէջտեղում

կանդնած էր մի գեղեցիկ յաղթական կամար՝ կանոչներով և զբյնզգոյն ծաղիկներով զարդարուած որի գլխին Մատսիս լերան պատկերն էր իւր ձիւնապատ զագամով և կրծքի վերայ ս էջմիածինն ու Շեմարանը, աջ և ձախ կողմերում հանգուցիւալ Հիմնադրի և որդի վեհ Հայրապետի անուանց Դ. և Ս. սկզբնատառերը փոքրիկ գրօշակներով շրջապատուած:

Հանդէոր սկսուեցաւ շարականով Ապա ամբիոն բարձրացաւ Շեմարանի Ծեսուչ Արժ Կարապետ վարդապետը և յառաջ բերաւ մի տեղիկագիր Շեմարանի 25-ամեայ անցեալի մասին որ լոյս է տեսնում «Արարատի ներկայ համարում» Անմիջապէս յետոյ Հնչեց «Ցէր Կեցու երդը քառաձոյն ներգաշնակութեամբ՝ իբրև առաջին արգիւնք Հ. Կոմիտասի երկու շարաթուայ աշխատութեան որով մի անգամից շատ մեծ փոփոխութիւն նկատուեցաւ աշակերտների երդեցողութեան մէջ ունկընդիրները խիստ գոհ մնացին Ապա Ա. լսարանի մի ուսանող կարգաց առ Հիմնադրին ուղղեալ մի զրարար ձօնի հանդէոր վակեց Ն. Ս. Օծութիւն Ազգիս Վեհ Հայրապետը օրհնելով հանգուցիւալ Հիմնադրի յիշտատիք, Շեմարանի զարգացման համար աշխատող անձերին, և բոլոր հանգիստականներին:

Շաշին Վանքի սեղանատան ներկայ էր ինքը Ն. Վեհափառութիւնը հրախրուած էին Շեմարանի ուսուցիչներն ու բազմութիւնիւրեր Սեղանի միջոցին խօսեց Սորբին Վեհափառութիւնը և հոգւոյ հանգստ մալթեց Շեմարանի Հիմնադրին հանդիսականները յոտնկայս ունկնդիրներին ապա Վեհափառ Հայրապետը առանձնացաւ վեհարան հանգստանալու տանալու:

Վեհ Հայրապետի մեկնելուց յետոյ Դեր Սուբիսա արքեպիսկոպ Պարզեանց առաջտրկից Սորբին Վեհափառութեան կենացը Երեանի թեմական գլուխանոցի նորընտիք տեսուչ Արժ Բենիկ վարդ «Մեծ մարդու» գաղափարը բացարելով՝ մասնացոյց արաւ այն արժանիքների վերայ որոնց շնորհիւ Դէռորդ Դ. առնելի հայրապետը մեծ մարդոց շարքն և դասուում Ծուշուոյ թեմական գլուխանոցի տեսուչ Արժ Տիրոյը վարդապետ ներկայանալով իբրև մէ-

կը Մայր Աթոռի Ճեմարանական կրտսեր միաբաններից՝ հրաւիրեց արժանաւոր յարզը մատուցանել աւագագոյններին և բաժակ առաջարկեց ամբողջ Միարանութեան համար: Գեր. Սուքիս արքեպիսկոպոս բարեմազմութիւններ արդաւ հայ աղզի համար և առաջարկեց, որ ներկայ հիւրերից մէկն արձագանդ տայ ժազովրդի զգացմանց: Պ. Բերերեւան խօսք առնելով յիշեց, թէ Ճեմարանի հաստատութիւնը մի հոգեորականի ձեռքով, նրա պահպանութիւնը նոյնպէս հոգեորականների ձեռքով ապացոյց է, որ մեր հոգեորականութիւնն այստում է ժամանակի կրթական պահանջներին բաւականութիւն տալ. բարեմազմութեց որ հոգեորականութիւնն է ժողովրդի մէջ սերտ խոտ լինի ընդ միշտ և Ճեմարանն իրրե այդպիսի կապի համար ամենազօրաւոր հանգոյց յորատեէ յաւիտեան: Սրանից յետոյ Զ. Դաստան մի աշակերտ կարգաց մի զրտար ուղղերձ, խօսեց և բարեմազմութիւններ արաւ նրեւնի թիւմ: Պարագանոցի հինաւուրց ուսուցիչ Մ. Պալեան: Ամէն մի կինացի վերջում Ճեմարանի աշակերտները երգում էին պատշաճաւոր երգեր: Առանձինն երգեց Արք. Կովտսոս վրդ. «Հայաստան» երզը, իւր զօրեղ և դեղեցիկ մշակուած ձայնով հմայելով հանդիսականներին: Առհասարակ Հ. Կոմիտասի կարճ միջոցում թէ եկեղեցական և թէ արտաքին երգեցողութեան մէջ մայրած զգայի բարեփոխութիւնը մեծապէս նորաստում էր այս հանգէսների շուքն աւելացնելու:

Ճաշից յետոյ մինչեւ երեկոյ Ճեմարանը բաց էր հարաբաւոր այցելուների առաջ: Սոյն երեկոյին Վեհափառ Հայրապետի օծման առնի նախատօնակ կտարարուեցաւ և հանդիսաւոր թափօրով Ն. Վեհափառութիւնը Մայր Յանձար իջաւ:

Երեկոյեան ժամի ճինս, ժամերգութեան աւարտելուց յետոյ՝ Ճեմարանի հանգիստանում նշանակուած էր «զրական երեկոյթ», ուր տեղի նուազութեան պատճառաւ հրափրուած էին վանքի միաբանները ուսուցիչները Ճեմարանի նախկին սաները և հեռաւոր տեղերից եկած հիւրերը բայց ներկայ դանուեցան նաև բազմաթիւ ոչ հրաւիրուածներ ներկոյթը բացեց Ճեմարանի ուսու-

ցիչ պ. Մ. Արեգեան՝ իւս ժամի չափ խօսերով դիւրդ Պ. Միծագործ Կալմուղիկոսի կեանքի և զործունէութեան մասին: Ապա խօսեց Ա. Ժ. Կոմիտսոս վրդ. «Խանգարմունք հայոց եկեղեցական երգեցողութեան բնուրանի ներքյ. այդ լուրջ ուսումնասիրութիւնը գեղեցիկ օրինակներով պարզաբանուած, լինելով մանաւանդ իւր տեսակի մէջ բոլորովին նոր բան՝ չառ համարական եր ներկայ բանիմաց հասարակութեան համար: Ամենարանութիւնից յետոյ կարդացուեցան Յ Թեմ: Գպլանոցներից ստացուած ուղերձները նախ կարդաց Արք. Տիրայր վրդ. Շուշութեան մեմական դպրանցից կողմից՝ զրարարութեայ պ. Պալեան՝ Նըւեանի թեմական զպրանցից կողմից՝ նոյնուու զբարարութեան և վերջին անդամ պլ. Մ. Մանզինեան՝ Թիվլիսի Ներսիսեան զպրանցի կողմից՝ աշխարհարար. բոլրը ուղերձները, մանաւանդ վերջինս արժանացան հանգիստականների ջերմ ծափահարութեանց:

Երեկոյթը „Եօյ Շարի“ օրհներդով վերջացնելուց յետոյ՝ հանդիսականները դիմեցին Ճեմարանի հիւսիսային կողմը ուր շքեղ ծրագալոյց եր պատրաստուած: Քիչ տուաջ եղանակի խառնուելը՝ անձրեն ու սասակի քամին արդելք եղան նախազծուած ճախ լուսավառութեան պարտիզում և բակում: և միայն Ճեմարանի շենքը զարդարուեցաւ զոյնզգոյն լուսակերներով, երբ քամին դադարեց: Ջրունող ահազին բաղմութիւնը զուարձանում էր լսելով մի կողմից Ալեքսանդրապոլցի յայտնի նուազիչ—ջութակահար Համբօի և նրա խմբի քայլոր երգերը և միւս կողմից Ճեմարանի ուսանողների երգերն ու նոյտ շրջապարերը զիտելով: Այս հանգեւոր սկսուեցաւ: „Եօյ Շարի հրանուց օրհներդով և վերջացաւ աշակերտաների երեկոյեան աղօթքով:

Երբ լուսակերները հանգցրին և բազմութիւնը ցրուեցաւ՝ ուսուցիչներ և աշակերտներ ընթրիքի նստան Ճեմարանի վերի յարկում, որին ներկայ էին նաև Մայր Աթոռի մի քանի միաբաններ ու սահմանթիւ հիւրեր նախկին սաներից: Սեղանի վերայ կինայներ առաջարկուեցան և ի միջի այլոց նախկին սան Ներսէս քահ. Ց. Պարտապետեան կար-

զաց Բագուի մի խումբ գործաւորների կողմից
քերած ուղերձը:

Պր. Ցովհաննէսեան կարդաց ամէն կող-
մից ուղղուած բազմաթիւ հեռագիրների մի
մասը և յիշեց միւս շնորհաւ որովների անուն-
ները:

Բոլոր ներկայ եղանակին բաշխուեցաւ մի
մի օրինակ «Դիեռք Դ. Մ'եծագործ կայլուղի-
կոսի» կենսագրութիւնից՝ որը յատկապէս 25
ամեակի առիթով պատրաստել էր Շեմարանի
ուսուցիչ պր. Մ. Արեգեանը:

Հեռագրներից մի քանիսը ուղղուած են
յանուն Սորին Վեհափառութեան, շատերը
յանուն Ն. Բարձր Սրբազնութեան Սուքիս
արքեպիսկոպոսի. մեծ մասն ուղղակի յանուն
Շեմարանի Սրտագին շնորհակալութիւն բո-
լորին Շեմարանի վարչութեան և Հանդիսա-
դիր Յանձնաժող վի կողմից:

Հեռագրողներից՝ Նդր. Ժամշարեան
յայտնում են, որ որոշել են հինգ հազար
բուրյի նուիրելով, առկոսիքը մի մշտական
որդեգիր ունենալ Շեմարանում. Եղբ. Տարա-
սեան նուիրում են միանուազ հազար բուրյի.
պ. Բարսեղ Դասպարեան, իրբե նախագահ՝
Մոսկուայի եկեղեցեաց Հոգաբարձութեան
կողմից յայտնում է, որ որոշել են եկեղեցեաց
հաշուին մի որդեգիր պահէլ ցաւարա ուս-
ման. Մոսկուայի եկեղեցեաց երեցփոխան
Մատինեան յայտնում է, որ Մոսկուայի
հայ ծխական համայնքը որոշել է մի բարե-
գործութեամբ յաւերժացնել ինչ. տարեգարձի
յիշատակը. պ. Պերճ Պռօշեանց նուիրում է
100օր. իւր գրուածներից Շեմարանի սաներին
բաժանելու համար. և նախկին սան Ջամբա-
զեան խնդրում է պասկ գնել Հիմնագրի գե-
րեզմանի վրայ, որի համար ուղարկում է
25 ր. Վերջինիս ցանկութիւնն անկատար
մնաց, որովհետեւ հեռագիրն ուշ ստուցուեց:



Հոկտ. 9-ին Թարգմանչաց առնի առիթով
Շեմարանում տեղի ունեցաւ մի փոքրիկ դրա-
կան հանդէս և էջմիածնի միարանութեան,
Շեմարանի ուսուցիչների և աշակերտների

ներկայութեամբ Երգուեցան մի քանի եր-
գեր. արտասանուեցան ստանաւորներ. Շնորհի,
Նսոյի սարկաւագի խօսեց ո. Մեսրոպի կեան,
քի, զործունէութեան և հայ մատենագրու-
թեան վերայ արած մեծ ազգեցութեան
մասին:

ՍԱՂՄՈՍԱԳԱԿՆԵՔԻ ՎԵՐԱՆԱՌՈԳՈՒԹԻՒՆԸ

Մեր նախնեաց թողած կարեսի յիշատակա-
րաններից մին, երեւմն հռչակաւոր և երկար
ժամանակից ի վեր աւերակ մնացած Սաղմոսա-
վաննը նորոգուում էր ահա քանի ամիս է, և
այժմ, երբ բոլոր նորոգութիւնները վերջացած են
հարկաւոր ենք համարում մի տեղեկութիւն տալ
այդ մասին Արարատի յարգելի ընթերցողներին
Հանգուցեալ Գրիգորիս եպ. Ազուաննանցն
է եղեւ, որ առաջին անգամ մատգրութիւն է
յայնեւ իւր ծախքով նորոգելու Սաղմոսավանը
և զնելու վանքի մօտի խառն հայտնակ և թուր-
քաբնակ փոքրիկ գեղը. Գժբախտաբար մահը¹
շուտ վրաց հաննելով, այդ նպատակին իրագործեն
չե յաջողուել նորան:

Ազգիս Վեհ. Հայրապետը լսած լի-
նելով Գրիգորիս եպ.-ի այդ բարի ցանկութիւնը
փափագեցաւ կատարել նըա կտակը. Գրիգորիս
եպ.-ի թողած կայքից ո. Էջմիածնի գանձարա-
նում գոյացած կար 3281 ո. և 50 կ. մի կո-
մար. Վեհ. Հայրապետը համայց գովծ զնել
այդ գումարը վանքի նորոգութեան համար բա-
րեհանելով մնելիք ծախքերի պակասը Կողմից
լրացնել:

Վեհ. Հայրապետի Յայիս, թ. 552, որը կոն-
դակի համաձայն Սինօդը թ. 673 օրագրութեամբ
շնուռ թիւնների վերահսկող նշանակեց Արքա-
նապատի Վեհանգ վեդ. Յովակիմեաննին: Մայիսի
ոկտոբերին սկսաւ վերանորոգութիւնը Ազքան-
գրապոլցի վարպետ Մկրտիչ Զարիֆեանի ձեռքով
և տեղ մնեց հոկտ. 10: Վեհ. Հայրապետն ին-
քը յաճախ անձամբ գնում և հոկում էր շնուռ-
թիւններին:

Նորոգուեցաւ վանքի՝ ամբողջ տանիքը՝ մի
մեծ և երկու փոքր գմբէթներով՝ որոնք բոլորու-
վին քայլայտած էին. հարաւային կողմի երկու-
մեծ լուսամուանները՝ որոնք փակուած էին, բաց-
ուեցան, և երկաթէ վանդակներ գրաւեցան. փոք-
րիկ տաճարի սեղանը ամբողջ օլիմպին վերաշնուռ-
ցաւ. արևմահան կողմի գուռը, որ նմանապէս
փակուած էր, բացուեցաւ. նորոգուեցաւ նաև հա-
րաւային գուռը. առհասարակ բոլոր լուսամուա-
ներին փեղկեր և շրջանակներ անցուեցան Տա-
ճարից գուրս արևելեան կողմում հին քաքառ՝

ուահ խորանի տանիքը և պատերը ամբողջովին նորոգուեցան. հեւսիս—արևելեան կողմի վայր ընկած երկու գեղցիկ խաչքարերը վերահաստատեցնեց:

Բացի այս շինութիւններից Ահճ. Հայրապետը զեղացիների համար շինել տուաւ նաև դաշտից գէտի զեղացի տանող, ինչպէս և գեղի միջի ճանապարհները՝ որոնք բոլորովին խանգառ բուած և գժուարանցանելի էին. այժմո էլ Մոլոսն անուն Աղեքանդրապոլիցի վարչութիւն յանձնուած է շինել գէտի անդնդախոր ձորը հանող խանգառուած ճանապարհը՝ մինչև Արակի լեռան ստորաբ, որտեղ գեղացիքը ցանք և կալեր ունին: Այս ճանապարհով կարելի կլնի ապա ձորի մէջ եղող աղբեւրի ամենապատռական ջուրը հեշտութեամբ վեր ճանել վանքի համար:

Ահճ. Հայրապետը միաք ունի նաև առաջիկայ գարնան նորոգել տալ տանարի սալայատակը և մեծ ուեզմնը, որ շատ բարձր է, և աստիճաններն անցարմաք. Նմանապէս միաբանութեան կամ վանահօր համար սենեալներ պատրաստել տալ՝ որի համար 550 սուբլի վճարով արգէն գնուած են մի շարք թուրքերի աներ:

Իոլոր այս նորոգութեանց վրայ մինչև այժմը ընկ ամէնը ծախսուած է 4210 ռ. 13 կուպ. որից 928 ռ. 63 կ. Ահճ. Հայրապետի նուէրն է, իսկ մասցեալը Գրիգոր եպ. - ի թողածը:

Տ Ա Շ Կ Ա Հ Ա Յ Ք.

Ա. Պատրիարք Հովհաննելու թողած լինելով առժամանակ պաշտօնավարութիւնը՝ Տ. Գրիգորիս եպո. Եղիշաննեւսանին յանձնեց վարել կրօնական ժողովին աշխատութիւնները. Նպաստից յանձնածողովն ալ նոյն նպատակով յանձնուեցաւ Տ. Վահրամ Մակոնի եպիսկոպոսին:

— Կիթլիսի Խորակատար վանքի որբանոցին վարչութեան Ս. Պատրիարք հօր զրկուծ հաշուեցցէն կը տեսնուի թէ որրանոցին մէջ կը խնամուին 41 որբեր, որոնք իրենց հարկաւոր եղած ուսումները ոսկորելէ զատ. կը սորբին նաև կօշկակարութիւն. Այս որբերուն ուսման, ուտելիքի, հագուստի և լուսական համար անցեալ տարուան հոկտ. և մինչև ներկայ սեպտ. սկիզբը ծախսուած է 19.518 զրշ., որ ամբողջովին գոցուած է մեծ մասմբ Եզդ. Պատրիարքանի նպատակով, մասամբ ալ զանազան բարերաններու նուէրներով Ա.արշութիւնը մօտերս պիտի ձեռնարկէ նաև որբանոցին յատուկ բաղնիքի

մը շինութեան, քաղաքին բարեւսէր հայ տիկիններուն մէջ բացուած հանգանակութեան արդիւնքով. — Նպաստից յանձնաժողովին որոշման համաձայն, Հաճնոյ մէջ որրանոց մը բացուած է, ուր կը ինամուին ու կը դաստիարակուին առ այժմ 25 օրրեր:

— Երրուսաղէմի և Յակոբեանց վանքին սեպհականութիւն եղող Սիօնի ս. Փրկչի վանքին շրջապատի նոր օրմերը՝ որոնք բարձրացուած են սրբատաշ քարերով, և անոր փառաւոր դռւուը՝ որուն ճակատը բրոշմուած է Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին անունն ու շինութեան թուականը, ամբողջովին աւարտեր են ։ Սրբազնութեան անձնական ծախորով որ 400 սովիէ աւելի գումար մը յատկացուցած էր այդ նպատակին:

— Կիպրոսի ազգայնոց հոգեոր հոգութիւնը Երուսաղէմի Ս. Աթոռին իրաւասութեան տակ գտնուելով, որոշմամբ Միաբանութիւնն Տնօրէն Ժողովին և հաւանութեամբ Ս. Պատրիարք Հօր, յիշեալ կզզիին հոգեոր հովիւ կարգուեցաւ Տ. Պետրոս արք Սարացեան, նորընտիր հովիւը հօկտեմբերի սկիզբը պաշտօնատեղին:

— Հայրապետական այն կոնցակը, որ կրօնական ժողովի 21 սեպտ. նուտին մէջ կարգացուեցաւ, Տ. Գրիգորիս Ալէաթձեան Սրբազնի կեանքն ու եկեղեցիին մատուցած ծառայութիւնները ներբողելէ և անոր մահուանը առթիւ ցաւ յայտնելէ Ետքը՝ մինչնյու ժամանակ կը ծանուցանէր Սիօնի նախանդամ Տ. Սարգիս արքեպիսկոպոսի մահը. Հայրապետական Կոնցակին ընթերցումէն անժիշտպէս ետքը, Արօն. Ժողովի ատենապետ Տ. Գրիգորիս արքեպոս. Ցովհաննեսեան իր անդամակիցներուն հետ ոտքի ելնելով՝ հանգիստ մաղթեց Սարգիս Սրբազնին հոգւցն:

— Յանուն Եզդ. վարչութեան Ամեն. Ա. Պատրիարքին կողմէ գոհունակութեան ու բաջալերութեան պաշտօնագիր մը զրկուեցաւ. Բաղէշի Առաջնորդական տեղապահ Տ. Եղիշէ Ա. Հիլինիկիրեանի, իր գոհացուցիչ պաշտօնավարութեան և վիճակային գործերուն մէջ իր խոհական ընթացքին համար:

— Եզդ. Պատրիարքանի կողմէ զիմումնեղած է Գրանայի Արթական նախարարութեան քանի մը ուշիմ տղաք ընդունել տալու համար Գրանայի բարձրագոյն վարժարանները մանկավարժ, ուսուցիչ և մասնագէտ ըլլուլու համար, ինչպէս արդէն Հայ—Հոռոմէական Պատրիարքարանին կողմէ այնպիսի զիմում եղած է քանի մը տարի առջ և տասնէ աւելի տղաք ընդունուած են ձրիապէս:

— Մարտի մէջ Միս Սամբռնակ անօրէնութեան տակ բացուած են երկուս որբանոցներ ուր կան 170 տղայ և 114 աղջիկ. ասոնք որդեգրուած են յԱնգլիա մէջ մէկ